ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԶՈԼԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 32

02 Դեկտեմբերի 2019 թվական

Գույքագրման մասին

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ, 42-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով և 77-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 02.06.2000թ. N102 հրամանը

Ավագանին որոշեց

1. Հաստատել համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գույքագրման փաստաթղթերը (01-գիրք)
2. Համայնքի ղեկավարին տալ համաձայնություն գույքագրման արդյունքում մաշված, շարքից դուրս եկած հիմնական միջոցները (ինչպես նաև արագամաշ, գրասենյակային, կենցաղային, հատուկ նպատակային նյութեր և ապրանքներ) սահմանված կարգով դուրս գրել համայնքի հաշվեկշռից:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ավագանի կողմ-8 դեմ-0

1. Հ.Ղազարյան
2. Կ Տոնեյան
3. Գ. Գրիգորյան
4. Ն.Սիմոնյան
5. Ա.Գասպարյան
6. Ա.Պողոսյան
7. Ն.Գրիգորյան
8. Հ.Գալստյան

Զոլաքար համայնքի ղեկավար Հ.Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԶՈԼԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 2-Ա

01 Մարտի 2019 թվական

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԶՈԼԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ 2019Թ. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության 28.12.2017թ. N 1726-Ն որոշմամբ,

Ավագանին որոշեց

1. Հավանություն տալ ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով Զոլաքար համայնքի կողմից ներկայացվելիք հետևյալ ծրագրային գաղափարին.
2. Զոլաքար համայնքում մանկապարտեզի շենքի կառուցում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ավագանի կողմ -7 դեմ՝-0

1. Հ.Ղազարյան
2. Կ Տոնեյան
3. Հ.Գալստյան
4. Գ.Լ.Գրիգորյան
5. Ն.Գրիգորյան
6. Ա.Պողոսյան
7. Ա.Գասպարյան

Զոլաքար համայնքի ղեկավար Ա.Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԶՈԼԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 12

11 Մարտի 2019 թվական

Բնակչության հաշվառման արդյունքների մասին

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի դրույթներով

Ավագանին որոշեց

1. Համայնքի բնակիչների 2019թ. հունվարին անցկացված հաշվառման արդյունքների մասի տեղեկատվությունը ընդունել ի գիտություն:
2. Համայնքի ղեկավարի խնդիրն համարել բնակչության հաշվառումն համարել յուրաքանչյուր տարվա հունվարին, իսկ արդյունքները Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության տարածքային ստորաբաժանմանը
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

ավագանի՝ կողմ -8 դեմ՝-0

1. Հ.Ղազարյան
2. Ն.Գրիգորյան
3. Կ.Տոնեյան
4. Ն.Սիմոնյան
5. Ա.Պողոսյան
6. Հ.Գալստյան
7. Գ.Գրիգորյան
8. Ս.Գասպարյան

Զոլաքար համայնքի ղեկավար Հ.Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶ ԶՈԼԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 13

11 Մարտի 2019 թվական

Համայնքի հաշվեկշռում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող ուսուցչի տուն ըստ բնակիչների կողմից գրաղեցրած տարածքների օտարման մասին

Զեկուցողը ներկայացրեց, որ համայնքի հաշվեկշռում կա 606.7քմ. մակերեսով 6260892 (վեց միլիոն երկու հարյուր վաթսուն հազար ութ հարյուր իննսուներկու) ՀՀ դրամ կադաստրային արժեքով և նրա սպասարկման համար հատկացված 0.2876հա մակերսով հողամաս 158180 (մեկ հարյուր հիսունութ հազար մեկ հարյուր ութսուն) ՀՀ դրամ կադաստրային արժեքով:

Նշված տարածքում 1976 թվականից մինչև օրս առանց սեփականության իրավունքի բնակվում են թվով 6 ընտանիք:

ՀՀ Կառավարության տարբեր որոշումներով հաստատված պաշտոնական (ծառայողական), ինչպես նաև հանրակացարային կացարանները որպես բնակելի տարածություն սեփականության իրավունքով քաղաքացիներին հատկացնելու մասին ՀՀ կառավարության տարբեր ժամանակահատվածների որոշումներով Զոլաքար համայնքի ուսուցչի տունը մեզ անհայտ պատճառներով սեփականության իրավունքով չի հատկացվել վերը նշված ընտանիքներին:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով համայնիք ավագանու 13.07.2018թ. N 28 որոշումը համայնքի ֆինանսական միջոցներով լիցենզավորված անձի կողմից պատվիրել է նշված շենքում առանց սեփականության իրավունքի բնակվող թվով 6 ընտանիքների ըստ զբաղեցրած մակերեսներով չափագրում

1. Էմմա Գևորգի Գրիգորյան 117.88քմ.
2. Գեղեցիկ Գասպարի Սարգսյան 44.43քմ
3. Դարվին Ավետիքի Մովսեսյան 127.78քմ
4. Գոհար Ժորայի Ավետիսյան 148.28քմ
5. Դոլարյա Կարապետի Վարդանյան 102.44քմ
6. Գայանե Աբովի Վարդանյան 42.17քմ:

Ուստի առաջարկվում է նշված շենք-շինությունը ըստ բնակիչների զբաղեցրած տարածքի անհատույց օտարման եղանակով օտարել թվով 6 ընտանիքներին, միաժամանակ առաջարկելով օտարումից հետո առաջացած ֆինանասական ծախսերը՝ այդ թվում նոտարական և պետական վճարներր ում միջոցներից պետք է կատարվի:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 11-րդ կետի պահանջներով և 18-րդ հոդվածի դրույթներով

Ավագանին որոշեց

1. Ընդունել զեկուցողի առաջարկը ի գիտություն և ուղերձ-խնդրանքով դիմել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետ պարոն Գ.Սանոսյանին նշված շենք շինությունը և նրա սպասարկման համար հատկացված հողամասը օտարման ինչ եղանակով տրամադրել վերը նշված բնակիչներին և օտարումից հետո առաջացած ֆինանասական ծախսերը՝ այդ թվում նոտարական և պետական վճարները ում միջոցներով պետք է կատարվի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից հետո տասներորդ օրը:

ավագանի՝ կողմ -8 դեմ՝-0

1. Հ.Ղազարյան
2. Ն.Գրիգորյան
3. Կ.Տոնեյան
4. Ն.Սիմոնյան
5. Ա.Պողոսյան
6. Հ.Գալստյան
7. Գ.Գրիգորյան
8. Ա.Գասպարյան

Զոլաքար համայնքի ղեկավար Ա.Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԶՈԼԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 5-Ա

06 Մայիսի 2019 թվական

Համայնքի բյուջեում փոփոխություն կատարելու մասին

Զեկուցողը ներկայացրեց, որ կատարվել է համայնքի հողի հարկի և գույքահարկի բազաների ճշգրտումներ և առաջարկվում է համայնքի 2019թ.-ի բյուջի պլանային մասում կատարել հետևյալ փոփոխություններ՝ գույքահարկ փոխադրամիջոցներից ավելացնել 500000(հինգ հարյուր հազար) դրամ և հողի հարկ ավելացնել 200000 (երկու հարյուր հազար) դրամ ընդամենը 700000 (յոթ հարյուր հազար) դրամ:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դրույթներով

Ավագանին որոշեց

1. Հաստատել զեկուցողի առաջարկը և համայնքի 2019թ.-ի բյուջի եկամտային մասում կատարել վերը նշված փոփոխությունները և նշված գումարը ավելացնել համայնքապետարանի նախահաշվի 4214 (կապի ծառայություններ) հոդվածին 100000 (մեկ հարյուր հազար) դրամ, 4657 (այլ կապիտալ դրամաշնորհներ) հոդվածին 600000 (վեց հարյուր հազար) դրամ:
2. Բյուջեի փոփոխված տարբերակը սահմանված կարգով առաքել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ավագանի կողմ -7 դեմ՝ -0

1. Հ.Ղազարյան
2. Կ Տոնեյան
3. Հ.Գալստյան
4. Գ.Լ.Գրիգորյան
5. Ն.Գրիգորյան
6. Ա.Պողոսյան
7. Ն.Սիմոնյան

Զոլաքար համայնքի ղեկավար Հ.Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԶՈԼԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 8-Ա

06 Մայիսի 2019 թվական

Համայնքում նախակրթարաններ հիմնելու և համաֆինանսավորելու մասին

Զեկուցողը ներկայացրեց, որ համայնքը ընդգրկվել է ՀՀ Կրթության և գիտության նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն» ՕԻԳ ՊՀ-ի նախադպրոցական կրթության միկրոծրագրում և նախատեսվում է համայնքի թիվ 1 ին և 2 րդ միջնակարգ դպրոցներում հիմնել նախակրթարաններ, որը կսկսի գործել սույն թվականի սեպտեմբերի 1-ից: Նշված ծրագրի ընդհանուր արժեքը ըստ կազմված նախահաշիվների կազմում է 26749600 ՀՀ դրամ, որը իր մեջ նեառում է շինարարական աշխատանքեր, գույքի ձեռքբերում, ուսումնական և ուսուցողական նյութեր, դաստիարակների աշխատավարձ, որից թիվ 1 միջնակարգ դպրոցին 13862300 ՀՀ դրամ, իսկ թիվ 2 միջնակարգ դպրոցին 12887300 ՀՀ դրամ: Համայնքի ներդրումը թիվ 1 միջնակարգ դպրոցի համար կազմում է 4761100 ՀՀ դրամ, որից 3375100 ՀՀ դրամ շինարական աշխատանքների համար, իսկ 1404000 ՀՀ դրամը դաստիարակների աշխատավարձ: Թիվ 2 միջնակարգ դպրոցի համար համայնքի ներդրումը կազմում է 4478000 ՀՀ դրամ, որից 3074000 ՀՀ դրամը շինարարական աշխատանքների համար, իսկ 1404000 ՀՀ դրամ դաստիարակների աշխատավարձ:

Ըստ գործող կարգի համայնքը առաջին փուլով շինարարական աշխատանքների մասով իր մասնաբաժին համաֆինանսավորման գումարը պետք է փոխանցի համապատասխան բացված հաշիվներին, որի վերաբերյալ ՀՀ Կրթության և գիտության նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն» ՕԻԳ ՊՀ ր ներկայացնի գումարի առկայության մասին քաղված, որից հետո ՀՀ Կրթության և գիտության նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն» ՕԻԳ ՊՀ-ը կշարունակի նախակրթարանների հիմնման գործընթացը, իսկ 2808000 ՀՀ դրամը կփոխանցվի 4 դաստիարակների աշխատավարձ նախակրթարանների բնականոն աշխատանքները սկսելու պահից:

Ուստի առաջարկվում է համայնքի բյուջեի ջրամատակարարման նախահաշվի 4657 (այլ կապիտալ դրամաշնորհներ) հոդվածից պակասեցնել ընդհանուրը 9239100 (ինը միլիոն երկու հարյուր երեսունիններ հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ՝ ավելացնելով համայնքի բյուջեի նախադպրոցական կրթության նախահաշվի 4657 (այլ կապիտալ դրամաշնորհներ) հոդվածին վերը նշված ծրագիրը իրականացնելու համար:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերի պահանջներով, 35-րդ և 38-րդ հոդվածներով և 46-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով

Ավագանին որոշեց

1. Հավանություն տալ զեկուցողի առաջարկին և համայնքի բյուջեի ջրամատակարարման նախահաշվի 4657 (այլ կապիտալ դրամաշնորհներ) հոդվածից պակասեցնել ընդհանուրը 9239100 (ինը միլիոն երկու հարյուր երեսունինը հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ՝ ավելացնելով

համայնքի բյուջեի նախադպրոցական կրթության նախահաշվի 4657 (այլ կապիտալ դրամաշնորհներ) հոդվածին համաֆինանսավորում կատարելու նպատակով:

2. Համայնքի բյուջեի նախադպրոցական կրթության 4657 (այլ կապիտալ դրամաշնորհներ) հոդվածից 9239100 (ինը միլիոն երկու հարյուր երեսունինը հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ հատկացնել համապատասխանաբար թիվ 1-ին միջնակարգ դպրոցին 4761100 (չորս միլիոն յոթ հարյուր վաթսունմեկ հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ և 2-րդ միջնակարգ դպրոցին 4478000 (չորս միլիոն չորս հարյուր յոթսունութ հազար) ՀՀ դրամ, որից 6431100 ՀՀ դրամը շինարարական աշխատանքների համար, իսկ 2808000 ՀՀ դրամը, որպես դաստիարակների աշխատավարձ նախակրթարանների բնականոն աշխատանքները սկսելու պահից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ավագանի կողմ 7 դեմ 0

1. Հ.Ղազարյան
2. Կ Տոնեյան
3. Հ.Գալստյան
4. Գ.Լ.Գրիգորյան
5. Ն.Գրիգորյան
6. Ա.Պողոսյան
7. Ն.Սիմոնյան

Զոլաքար համայնքի ղեկավար Ա.Ղազարյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԶՈԼԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ * 08203592 *

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԶՈԼԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 15

05 Հունիսի 2019 թվական

Ոռոգման աշխատանքների նախապատրաստվելու մասին

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ, 18-րդ և 49-րդ հոդվածի դրույթներով.

Ավագանին որոշեց

1. Առաջարկել համայնքի ղեկավարին
   1.) Կազմակերպել համայնքի սեփականություն հանդիսացող ոռոգման ցանցի ինչպես նաև հողաշեն առուների մաքրման և վերանորոգման աշխատանքները.
   2.) Ոռոգման աշխատանքներր անխափան կանոնակարգելու համար նշանակել պատասխանատու աշխատողների.
   3.) Մշակել և գործողության մեջ դնել ոռոգման կազմակերպման ժամանակացույց, այդ մասին իրազեկել բնակչությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ավագանի՝ կողմ -8 դեմ՝-0

1. Հ.Ղազարյան
2. Ն.Գրիգորյան
3. Կ.Տոնեյան
4. Ն.Սիմոնյան
5. Ա.Պողոսյան
6. Հ.Գալստյան
7. Գ.Գրիգորյան
8. Ա.Գասպարյան

Զոլաքար համայնքի ղեկավար Ա.Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԶՈԼԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔ

ՈՐՈՇՈՒՄ N 18

05 Հունիսի 2019 թվական

Համապետական շաբաթօրյակի կազմակերպման մասին

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Գ.Մանոսյանի գրությունը

Ավագանին որոշեց

1. Համայնքի ղեկավարի խնդիրն համարել սույն թվականի հունիսի 8-ին հայտարված համապետական շաբաթօրյակը պատշաճ մակարդակով կազմակերպելու համար շաբաթօրյակի մասնակիցներին ապահովել ձեռնոցներով, աղբի համար նախատեսված պարկերով, աշխատանքային գործիքներով:
2. Համակործակցել հանրապետական գործադիր մարմինների, հանրակրթական, առողջապահական հիմնարկների, տնտեսվարող սուբյեկտների հետ:
3. Հանրապետական շաբաթօրյակի պատասխանատու նշանակել համայնքի ղեկավարի տեղակալ Պետրոս Մաքսիմի Սարիբեկյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ավագանի՝ կողմ -8 դեմ՝-0

1, Հ.Ղազարյան
2. Ն.Գրիգորյան
3. Կ.Տոնոյան
4. Ն.Սիմոնյան
5. Ա.Պողոսյան
6. Հ.Գալստյան
7. Գ.Գրիգորյան
8. Ա.Գասպարյան

Ջոլաքար համայնքի ղեկավար՝ Ն.Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԶՈԼԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 12-Ա

14 Նոյեմբերի 2019 թվական

Զոլաքար գյուղի բնակիչ Արսեն Ռուբիկի Սերգեյանի դիմումի քննարկումը իրեն անօթևան ճանաչելու վերաբերյալ

Զեկուցողը ներկայացրեց, որ համայնքի բնակարանային պայմանները ուսումնասիրող հանձնաժողովը ուսումնասիրել է Զոլաքար համայնքի բնակիչ զին.ծառայության 2-րդ խմբի հաշմանդամ Արսեն Ռուբիկի Սերգեյանի բնակարանային պայմանները: Ուսումնասիրությունից պարզվել է որ Արսեն Ռուբիկի Սերգեյանի ընտանիքը չունի սեփական բնակարան, ունի երեք անչափահաս երեխաներ և առանց սեփականության իրավունքի բնակվում են հանգուցյալ պապու՝ Մանուկ Առաքելի Սարգսյանի բնակարանում, որը օրենքով սահմանված կարգով փոխանցվել է նրա որդի Աշոտ Մանուկի Սերգեյանին: Արսեն Ռուբիկի Սերգեյանի կողմից ներկայացվել է նաև Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից տրամադրած գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ տեղեկանքները, որում նշված է, որ Արսեն Ռուբիկի Սերգեյանը և իր ընտանիքի անդամներ չունեն բնակելի կառուցապատման հողամաս և 2007 թվականից առ այսօր իրենց կողմից Հայաստանի Հանրապետությունում կնքված անշարժ գույքի նկատմամբ օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ:

Զեկուցողը նշեց նաև, որ Արսեն Ռուբիկի Սերգեյանին 2013թ. հաշվանդամության վերաբերյալ տրված տեղեկանքում նշված 3-րդ խմբի հաշմանդամությունը 01.11.2019թ. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի Հայաստանի Հանրապետության բժշկասոցիալական փորձաքննության գործակալության N1330659 որոշմամբ դարձել է 2-րդ խումբ:

Ուստի առաջարկվում է համայնքի ավագանուն Արսեն Ռուբիկի Սերգեյանի ընտանիքը ճանաչել որպես անօթևան:

Լսելով զեկուցողին արտահայտվեցին ավագանու անդամներ Կ.Տոնեյանը, Գ.Գրիգորյանը

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով համայնքի բնակարանային պայմանները ուսումնասիրող հանձնաժողովի թիվ 2 արձանագրությունը, Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից տրամադրած գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ տեղեկանքները, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի Հայաստանի Հանրապետության բժշկասոցիալական փորձաքննության գործակալության N1330659 որոշումը,

Ավագանին որոշեց

1. Զոլաքար համայնքի ավագանու 2017թ-ի դեկտեմբերի 19-ին տեղի ունեցած ավագանու թիվ 10-րդ նիստի N 43 որոշման 1-ին և 2-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

1.) Զին.ծառայության 2-րդ խմբի հաշմանդամ Արսեն Ռուբիկի Սերգեյանի ընտանիքին ճանաչել որպես անօթևան:

2.) Առաջարկել համայնքի ղեկավարին դիմել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին Արսեն Ռուբիկի Սերգեյանի ընտանիքն ընդգրկել բնակարանով ապահովման հաշվառման ցուցակներում որպես անօթևան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ավագանի կողմ -8 դեմ՝-0

1. Հ.Ղազարյան

2. Կ Տոնեյան

3. Հ.Գալստյան

4. Գ.Լ.Գրիգորյան

5. Ն.Գրիգորյան

6. Ա.Պողոսյան

7. Ն.Սիմոնյան

8. Լ.Գալստյան

Ջրվեժ համայնքի ղեկավար Հ.Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԶՈՒԼԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 15-Ա

14 Նոյեմբերի 2019 թվական

2020թ.-ին համայնքի բնակավայրի գլխավոր հատակագիծ կազմելու մասին

Զեկուցողը նշեց, որ համայնքի վարչական տարածքում գտնվող 05-034-0330-, 05-034-0244-, 05-034-0245-, 05-034-0246-, 05-034-0247-, 05-034-0248-, 05-034-0249-, 05-034-0250-, 05-034-0251-, 05-034-0330-0012 կադաստրային ծածկագրերով գույքերը հանդիսանում են գյուղատնտեսական նշանակության վարելահողեր,(05-034-0330-0012 կադաստրային ծածկագրով 1.095հա մակերեսով հողամասում կառուցված է Հարություն Արթո Սեդրակի Թունչբոյաջյանի առանձնատունը) իսկ համայնքի բնակչությունը աճող ընտանիքների համար չունի բնակելի կառուցապատման հողեր առանձնատներ կառուցելու և զարգանալու հնարավորություն:

Ելնելով վերոգրյալից համայնքի ղեկավարը ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի դրույթներով առաջարկում է համայնքի ավագանուն թույլատրել 2020թ.-ին համայնքի բնակավայրի գլխավոր հատակագիծ կազմելիս նշված ծածկագրերով գույքերը փոխադրել բնակավայրի նպատակային նշանակության հողերի:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ, 13-րդ, 18-րդ և 43-րդ հոդվածների դրույթներով

Ավագանին որոշեց

1. Զոլաքար համայնքի վարչական տարածքում գտնվող 5-034-0330-, 05-034-0244-, 05-034-0245-, 05-034-0246-, 05-034-0247-, 05-034-0248-, 05-034-0249-, 05-034-0250-, 05-034-0251-, 05-034-0330-0012 կադաստրային ծածկագրերով գույքերը (05-034-0330-0012 կադաստրային ծածկագրով 1.095հա մակերեսով հողամասում կառուցված է Հարություն Արթո Սեդրակի Թունչբոյաջյանի առանձնատունը) 2020թ.-ին համայնքի համայնքի բնակավայրի գլխավոր հատակագիծ կազմելիս փոխադրել բնակավայրի նպատակային նշանակության հողերի:
2. Ուղերձ խնդրանքով դիմել Հայստանի Հանրապետության Գեղարքունիք մարզպետ պարոն Գնել Սանոյանին մարզպետարանի համապատասխան աշխատակիցների միջոցով 2020թ.-ին նշված աշխատանքներ կազմակերպելու համար տրամադրել մասնագիտական և իրավաբանական խորհրդատվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ավագանի կողմ -8 դեմ՝-0

1. Հ.Ղազարյան 2. Կ Տոնեյան

3. Հ.Գալստյան

4. Գ.Լ.Գրիգորյան

5. Ն.Գրիգորյան

6. Ա.Պողոսյան

7. Ն.Սիմոնյան

8. Կ.Ասատրյան

Գոլաբար համայնքի ղեկավար՝ Մ.Ազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԶՈԼԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 27

01 Հոկտեմբերի 2019 թվական

Բյուջեի 2019թ. 3-րդ եռամսյակի կատարողականի մասին

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 րդ հոդվածի 1 ին մասի 5 րդ կետի դրույթներով

Ավագանին որոշեց

1. Զոլաքար համայնքի բյուջեի 2019թ. 3-րդ եռամսյակի կատարողականը ներքոհիշյալ համամասնությամբ
   - Սեփական եկամուտների հավաքագրումը կազմել է 91.7%
   - Համահարթեցման դոտացիան կազմել է 100%

   Ընդունել ի գիտություն
2. Համայնքի ղեկավարի և համայնքապետարանի աշխատակազմի խնդիրն համարել հետևողական աշխատանքներ տանել հարկերի և նախորդ տարիների ապառքների գանձման ուղղությամբ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

ավագանի կողմ 8 դեմ 0

1. Հ.Ղազարյան
2. Կ Տոնեյան
3. Հ.Գալստյան
4. Ն.Սիմոնյան
5. Ն.Գրիգորյան
6. Ա.Պողոսյան
7. Ա.Գասպարյան
8. Գ.Գրիգորյան

Զոլաքար համայնքի ղեկավար Ա.Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԶՈԼԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 29

01 Հոկտեմբերի 2019 թվական
Համայնքի սեփականություն հանդիսացող
գույքերի գուքագրում անցկացնելու մասին

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ, 42-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով և 77-րդ հոդվածի պահանջներով

Ավագանին որոշեց

1. Համայնքի ղեկավարի խնդիրն համարել
   1.) Համայնքի սեփականություն հանդիսացող գույքերի գույքագրում անցկացնելու համար ստեղծել համապատասխան հանձնաժողով
   2.) Գույքագրումն ավարտել մինչև ս/թ. դեկտեմբերի 2-ը.
   3.) Գույքագրման փաստաթղթերը ներկայացնել ավագանու հաստատմանը
   4.) Սեփականության իրավունքով գույք ձեռք բերելուց կամ գույքն օտարելուց հետո 7 օրյա ժամկետում գույքագրման փաստաթղթերում կատարել համապատասխան փոփոխություններ և ներկայացնել ավագանու հաստատմանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ավագանի կողմ՝ 8 դեմ՝ 0

1. Հ.Ղազարյան
2. Կ Տոնեյան
3. Հ.Գալստյան
4. Ն.Սիմոնյան
5. Ն.Գրիգորյան
6. Ա.Պողոսյան
7. Ա.Գասպարյան
8. Ս.Գրիգորյան

Ձոյաբար համայնքի ղեկավար՝ Հ.Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԶՈԼԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 30

01 Հոկտեմբերի 2019 թվական

Զոլաքար համայնքի բնակիչ Կարեն Խալտուրի Պողոսյանի սեփականություն հանդիսացող արդյունաբերական, ընդերքոգտագործման և այլ արտադրական նշանակության /գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ գործառնական նշանակության/ 0.204հա հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրի կատեգորիայի /հասարակական կառուցապատման գործառնական նշանակության/ փոփոխման մասին

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2011թ.թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով

Ավագանին որոշեց

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Զոլաքար համայնքի վարչական սահմաններում գտնվող Զոլաքար համայնքի բնակիչ Կարեն Խալտուրի Պողոսյանի սեփականություն հանդիսացող արդյունաբերական, ընդերքոգտագործման և այլ արտադրական նշանակության /գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ գործառնական նշանակության/ 0.204հա հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրի հողերի կատեգորիա հասարակական նշանակության օբյեկտներ (առևտրի կետեր և բնակչության սպասարկման համար այլ օբյեկտներ) կառուցելու համար:
2. Խնդրել ՀՀ Գեղարքունիքի մարզպետին սույն որոշումը ներկայացնելու հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

ավագանի կողմ -8 դեմ -0

1. Հ.Ղազարյան
2. Կ Տոնեյան
3. Հ.Գալստյան
4. Ն.Սիմոնյան
5. Ն.Գրիգորյան
6. Ա.Պողոսյան
7. Ա.Գասպարյան
8. Հ.Գրիգորյան

Զոլաքար համայնքի ղեկավար Հ.Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԶՈԼԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔ

ՈՐՈՇՈՒՄ N2

31 Հունվարի 2019 թվական

2018թ.համայնքի բյուջեից կատարված ծախսերի վերաբերյալ համայնքի ղեկավարի հաշվետվության մասին.

1.) Լսեցին-2018թ.համայնքի բյուջեից կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվության մասին. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի գլխավոր բարտուղար Սնակ Խլղաթյանի գրությունը՝ մասնակցությամբ համայնքի բնակիչների և Գեղարքունիք մարզպետարանի աշխատակից Խաչիկ Լևոնյանի, մանրամասն ներկայացրեց 2018 թվականին համայնքի բյուջեից կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվությունը: Ինչես նաև նշեց, որ 2018թ. բյուջեի եկամտային մասը կազմել է 103.4%, իսկ սեփական եկամուտների կատարումը 131.7%:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածով և <<բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով՝

Ավագանին որոշեց

1. Համայնքի ղեկավարի 2018թ. վերաբերյալ ներկայացված հաշվետվությունը ընդունել ի գիտություն:
2. Բյուջեի 2018թ. կատարումը եկամուտների մասով համարել գերազանց:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ավագանի՝ կողմ -8 դեմ՝-0

1, Հ.Ղազարյան 2. Ն.Գրիգորյան

3. Կ.Տոնեյան 4. Ն.Սիմոնյան

5. Ա.Պողոսյան 6. Հ.Գալստյան

7. Գ.Գրիգորյան Ս.Գասպարյան

Ձոյաբար համայնքի ղեկավարի Հ.Ղազարյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԶՈԼԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ 08203592

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԶՈԼԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 6

31 Հունվարի 2019 թվական

Տեղական տուրքերի և դրույքաչափերի հաստատելու մասին

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 11-րդ և 19-րդ ենթակետերի դրույթներով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի դրույթների և 14-րդ հոդվածի 1-ին կետի 7)-րդ և 8)-րդ ենթակետերի պահանջներով

Ավագանին որոշեց

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների ներառյալ ոչ հիմնական /շինարարության/ տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է՝

հիմնական շենք շինությունների համար՝

ա/. Մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 15000 ՀՀ դրամ:

բ/. Սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա/. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 30000 ՀՀ դրամ:

բբ/. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 50000 ՀՀ դրամ:

բգ/. 1001-ից մինչև 3001 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 50000 ՀՀ դրամ:

բդ/. 3001 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 100000 ՀՀ դրամ:

2. Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմանել յուրաքանչյուր մեկ շնչի հաշվով տարեկան վեց հարյուր ՀՀ դրամ:

3. Համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմանել յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար տարեկան երեք դրամ:
4. Համայնքի տարածքում ոգելից խմիչքներ և ծխախոտի վաճառքի թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝

ա/. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար ութ հարյուր դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տաս հազար հինգ հարյուր դրամ.

բ/. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար ութ հարյուր դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տաս հազար հինգ հարյուր դրամ.

5. Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ վաթսուն հազար դրամ.
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ավագանի՝ կողմ -8 դեմ՝-0

1. Հ.Ղազարյան
2. Ն.Գրիգորյան
3. Կ.Տոնեյան
4. Ն.Սիմոնյան
5. Ա.Պողոսյան
6. Հ.Գալստյան
7. Գ.Գրիգորյան
8. Ա.Գասպարյան

Զոլաքար համայնքի ղեկավար՝ Ա.Ղազարյան

Հ Հ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԶՈԼԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ 08203592

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՋՈՂԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔ

ՈՐՈՇՈՒՄ N 7

31 Հունվարի 2019 թվական

Խմելու ջրի համակարգի կառուցման մասին

Ղեկավարվելով << տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի դրույթով և հաշվի առնելով համայնքի բնակչության խմելու ջրի մատակարարման բարելավման կենսական անհրաժեշտությունը և առաջնահերթությունը, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ջոլաքար համայնքի ավագանին

Ավագանին որոշեց

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ջոլաքար գյուղական համայնքի ջրամատակարարման համակարգի ներքին ցանցի կառուցման համար այլ միջոցներ ներգրավելու առաջարկով դիմել Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման հիմնադրամ:
2. Պարտավորություն ստանձնել ամբողջությամբ ապահովելու ծրագրի շրջանակներում համայնքից պահանջվող գումարային ներդրումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ավագանի կողմ -8 դեմ -0

1. Հ.Ղազարյան
2. Ն.Գրիգորյան
3. Կ.Տոնոյան
4. Ն.Սիմոնյան
5. Ա.Պողոսյան
6. Հ.Գաբրիելյան
7. Գ.Գրիգորյան
8. Ն.Գասպարյան

Ջոլաքար համայնքի ղեկավար Ն.Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶ ՋՈԼԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 8
31 Հունվարի 2019 թվական
Համայնքի Մշակույթի կենտրոնի տնօրենի թեկնածուի վերահաստատելու մասին

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության 18-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ ենթակետի պահանջներով

Ավագանին որոշեց

1. Տալ համաձայնություն համայնքի մշակույթի կենտրոնի տնօրենի պաշտոնում նշանակել Անդրանիկ Ռուբիկի Ավետիսյանին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

ավագանի կողմ -8 դեմ՝-0

1, Հ.Ղազարյան 2. Ն.Գրիգորյան

3. Կ.Տոնեյան 4. Ն.Սիմոնյան

5. Ա.Պողոսյան 6. Հ.Գալստյան

7. Գ.Գրիգորյան 8. Ա.Գասպարյան

Ջոլաքար համայնքի ղեկավար Ա.Ղազարյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՋՈԼԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԴՊՐՈՑ * 08203592 *

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԶՈԼԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 10

31 Հունվարի 2019 թվական

Գնումների հանձնաժողով ստեղծելու մասին.

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով պահանջներով և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ

Ավագանին որոշեց

1. Ստեղծել համայնքի կարիքների համար գնումներ իրականացնող հանձնաժողով հետևյալ կազմով
   - Գնահատող հանձնաժողովի նախագահ- Գուրգեն Մխիթարյան
   - Պատասխանատու ստորաբաժանման ղեկվար- Արայիկ Գրիգորյան
   - Քարտուղար –Սվետիկ Նիկողոսյան
   - Գնահատող հանձնաժողովի անդամ- Պետրոս Սարիբեկյան
   - Գնահատող հանձնաժողովի անդամ- Լևոն Գրիգորյան
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ավագանի՝ կողմ -8 դեմ՝-0

1, Հ.Ղազարյան 2. Ն.Գրիգորյան

3. Կ.Տոնեյան 4. Ն.Սիմոնյան

5. Ա.Պողոսյան 6. Հ.Գալստյան

7. Գ.Գրիգորյան 8. Ա.Գասպարյան

Զոլաքար համայնքի ղեկավար Ա.Ղազարյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ԶՈԼԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 08203592